

2098



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«24» 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N° 043 - 25

Նախաձեռնող՝

«ԱԿԲՈՒ» ՍՊԸ

Տավուշի մարզ, Անդրանիկի փողոց, 2/27 փ.

Գործունեությունը՝

Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի
հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքից հանքային
ջրի արդյունահանում

Լոռու մարզ, Տաշիր համայնք, Սարափովկա բնակավայր

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 043 - 25

«24» *փետրվարի* 2025թ.

Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ԱԿԲՈՒ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Լոռու մարզ, Տաշիր համայնք, Սարատովկա բնակավայր

Ներածական մաս. Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Տաշիր համայնքի Սարատովկա բնակավայրի վարչական տարածքում: Սարատովկա բնակավայրի մոտակա բնակելի տներից 250-300 մ, Ստեփանավան-Տաշիր ճանապարհից՝ մոտ 150.0 մ հեռավորության վրա:

Հայցվող տարածքի հողերը ներկայացված են համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ե. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գործունեության նպատակն է իրականացնել Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից հանքային ջրի արդյունահանում՝ շշայցման նպատակով:

Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի մանրամասն հետախուզական աշխատանքները կատարվել են 1991-1993թթ.-ին, որի արդյունքում յոթ հորատանցքերով հաշվարկվել և ՀՀ կառավարությանն առընթեր օգտակար հանածոների պաշարների հանձնաժողովի (ՕՀՊՀ) կողմից 01.11.1993թ.-ի դրությամբ (արձանագրություն թիվ 6, 24.12.1993թ.) հաստատվել են Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործական պաշարները, այդ թվում՝



Հանքային ջրի պաշարներ

4/87 հորատանցքով - A կարգի՝ 0.56 լ/վրկ կամ 48.4 մ³/օր,

1ՔՅ հորատանցքով - A կարգի՝ 0.38 լ/վրկ կամ 32.8 մ³/օր,

35/87 հորատանցքով - A կարգի՝ 0.42 լ/վրկ կամ 36.3 մ³/օր,

3ՔՅ հորատանցքով - A կարգի՝ 2.4 լ/վրկ կամ 207.4 մ³/օր:

7/90 հորատանցքով - A կարգի՝ 2.38 գ/լ կամ 205.6 մ³/օր

Ըստ A կարգի՝ 6.14 լ/վրկ կամ 530.5 մ³/օր (Տաշիր-1 տեղամաս)

2ՔՅ հորատանցքով - B կարգի՝ 1.66 լ/վրկ կամ 143.4 մ³/օր,

6/90 հորատանցքով - B կարգի՝ 1.95 լ/վրկ կամ 168.5 մ³/օր

Ըստ B կարգի՝ 3.61 լ/վրկ կամ 311.9 մ³/օր (Տաշիր-2 տեղամաս)

Ազատ ածխաթթու գազի պաշարներ

4/87, 1ՔՅ, 35/87, 3ՔՅ և 7/90 հորատանցքերով - A կարգի՝ 0.73 լ/վրկ կամ 63.1 մ³/օր,

2ՔՅ և 6/90 հորատանցքերով - B կարգի՝ 0.34 լ/վրկ կամ 29.4 մ³/օր

Հանքավայրի հանքային ջրի շահագործական պաշարները կարող են օգտագործվել արդյունաբերական շրջանում և առողջանարային բուժման համար:

Հորատանցքի տեղագրական կոորդինատները հետևյալն են.

I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով	
X = 4549757	Y = 8442252	X = 4549750	Y = 8442150

Թիվ 2ՔՅ հորատանցքից հանքային ջրի արդյունահանում երբևէ չի իրականացվել:

Ջրահավաք թիվ 2ՔՅ հորատանցքն իր գլխամասային սարքավորումներով կներառվի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիում: Գոտու սահմանը սահմանվում է 15.0 մx25.0 մ=375 մ²:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմելու է 1.66 լ/վրկ կամ 52349.8 մ³/տարի: Ընկերությունը նպատակ ունի հանքային ջրի արդյունահանման իրավունք ստանալուց հետո (5 տարվա ընթացքում) Լոռու մարզի Տաշիր համայնքի Սարատովկա բնակավայրի վարչական տարածքում կառուցել հանքային ջրի շրջանում գործարան իր ենթակառուցվածքներով:

Մինչ շրջանում գործարանի կառուցումը, ընկերությունը պայմանագրային կարգով շրջանում գործունեություն կիրականացնի Երևան քաղաքում գտնվող՝ «Յունիոն» ՍՊԸ-ի շրջանում գործարանի տարածքում, որտեղ ընկերությունը կատարում է քաղցրահամ ջրի և ըմպելիքների շրջանում: Հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքից դեպի շրջանում գործարան հանքային ջրի տեղափոխումը կիրականացվի ԿԱՄԱՁ 53229 մակնիշի բեռնատար մեքենայով՝ կահավորված չժանգոտվող պողպատից պատրաստված 13.2 տ տարողությամբ ցիստեռնով:

Գործարանում տեղադրված ժամանակակից սարքավորումների հզորությունները լիովին բավարարում են իրականացնել նաև հանքային ջրի շրջանում:

Հանքային ջրերի ջերմաստիճանը տատանվում է՝ 15.0-17.3 °C, հանքայնացումը՝ 2.2-3.8գ/լ սահմաններում, իսկ ստատիկ մակարդակը՝ + 0.69-ից մինչև +3.84 մետր:

Հանքավայրի հորատանցքերը շատրվանում են հիմնականում գազի ֆստի հաշվին:

Հանքային ջրերի շարժման ուղղությունն արևելքից դեպի արևմուտք է:



Ձորագետի հանքավայրի հանքային ջուրն ըստ քիմիական կազմի՝ հիդրոկարբոնատ-սուլֆատային, մագնեզիում-նատրիումային է, մասամբ մագնեզիում-կալցիումային:

Լուծված CO₂ գազի պարունակությունը կազմում է 1.4-2.3գ/լ, իսկ ազատ CO₂ գազինը՝ 1.06-1.28գ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտներից բորի պարունակությունը կազմում է մինչև 0.8 մգ/լ, բրոմինը՝ 0.25-1.0մգ/լ, յոդինը՝ 0.12-0.5մգ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների քանակի պարունակությունը չի գերազանցում թույլատրելի սահմանները:

Ըստ ջրածնային ցուցանիշի՝ հանքային ջուրը թույլ թթվայինից մինչև թույլ հիմնային է:

Ռադիոակտիվ էլեմենտներից ուրանի պարունակությունը կազմում է 1.2x10⁻⁹գ/լ, ռադիումինը՝ 5.0x10⁻¹⁰գ/լ:

Հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորվելու է համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ, ինչի նպատակն է հանքային ջրերի պահպանությունն ու աղտոտման կանխարգելումը:

Ջրահավաք հորատանցքի շուրջն ստեղծվելու է սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտի, որը ցանկապատվելու է:

Հորատանցքի բերանի շուրջ կատարվելու է ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը կբացադի մակերևութային աղտոտված ջրերի հոսքը դեպի հորատանցք:

Հանքային ջուրը ջրհավաք հորատանցքից չժանգոտվող (խմելու որակի) խողովակով բեռնվելու է չժանգոտվող պողպատից պատրաստված 13.2տ տարողությամբ ցիստեռնի մեջ:

Կապտածային շինության շուրջը բացառվելու է ցանկացած տեսակի գործունեություն, որը կարող է որևէ կերպ ազդել հանքային ջրի վրա:

Ձորագետի հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքի շահագործումը ընկերությունը կիրականացվի փակ ռեժիմով, այսինքն՝ հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կկահավորվի համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ:

Ընկերությունն օգտվելու է արդեն իսկ գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից, նոր շինարարական աշխատանքներ չեն նախատեսվում:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չկան, պատմության, բնության հուշարձաններ գործունեության իրականացման տարածքում առկա չեն:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներ կարող են հանդիսանալ հանքային ջրի տեղափոխման աշխատանքները, տրանսպորտի տեղաշարժը: Հանքավայրում գումարային հաշվարկային ծայնային բնութագիրն ընդունված է 65դԲԱ: Աղմուկի մակարդակը Սարատովկա գյուղի մոտ կկազմի՝ 45 դԲԱ:

Հանքային ջրի տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Գործունեության բնույթից ելնելով՝ հանքային ջրի շահագործման աշխատանքների ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության



մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- կապտաժային սարքավորումների պարբերական ստուգումներ, որի արդյունքում մաշված, շարքից դուրս եկած սարքավորումները կփոխարինվեն նորերով,

-աժխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումն իրականացվելու է ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք հորատանցքից օգտակար հանածոների պաշարների հանձնաժողովի (ՕՀՊՀ) կողմից հաստատված պաշարի չափից ավելի արդյունահանումը,

-աժխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքերի շահագործումն իրականացվելու է հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան,

-գործունեության իրականացման տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում են հատուկ միջոցառումներ,

-շահագործման ժամանակ ապահովվելու է ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը,

-հատուկ ուշադրություն է դարձվելու, որ հարակից տարածքները չաղտոտվեն կենցաղային աղբով և այլ տեսակի թափոններով:

Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-հանքային ջրի քիմիական կազմի մշտադիտարկումներ եռամսյակը մեկ անգամ,

ջրի մակարդակի, ջերմաստիճանի, ջրի ծախսի մշտադիտարկումներ՝ 10 օրը մեկ անգամ,

-մթնոլորտային օդի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,

-հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ տարեկան երկու անգամ,

-աղմուկի մակարդակի չափումներ՝ տարեկան մեկ անգամ,

-կենսաբազմազանության ուսումնասիրություն՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան տրամադրել 100.0 հազար ՀՀ դրամ:

Հանքային ջրի, հողային ծածկույթի, մթնոլորտային օդի և կենսաբազմազանության մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տրամադրել 1500 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Լոռու մարզի Ձորագետի աժխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքից հանքային ջրի արդյունահանման վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Լոռու մարզի Տաշիր համայնքի Սարատովկա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Լոռու մարզպետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն



Ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Արդյունահանման աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել ազդակիր բնակավայրի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- Արդյունահանման իրավունք ստանալուց հետո Լոռու մարզի Տաշիր համայնքի Սարատովկա բնակավայրի վարչական տարածքում հանքային ջրի շտապման գործարան կառուցելու դեպքում կառուցման նախագծային փաստաթղթերն ըստ անհրաժեշտության ներկայացնել փորձաքննության:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԱԿԲՈՒ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Լերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան